ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՔԱՂՎԱԾՔ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 38-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍ N 3)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետի և 82.1-ին հոդվածի 6-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ: Ստորագրություն:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2024 թվականի մարտի 19-ի թիվ 38-Ա որոշման

Հաշվետվություն

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի կատարման վերաբերյալ



Ախուրյան համայնք 2024թ.

Ներածություն

Ձեզ ներկայացվող հաշվետվությունը մշակվել է Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից, հասցեագրված է համայնքի ավագանուն, աշխատակազմին, համայնքային կազմակերպություններին, համայնքի բնակիչներին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպություններին ու խմբերին, շահագրգիռ այլ անձանց:

2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը կազմելիս իրականացվել է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտում: Ֆինանսական ու տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում ուղեցույց ենք ընտրել նպատակային և հավասարաչափ զարգացման տեսլականը, ընտրված ռազմավարական քաղաքականությամբ ձեռնարկել ենք ամբողջական քայլեր, որոնց կիրառմամբ ժամանակին ու արդյունավետ, առարկայական լուծումներ ենք տվել համայնքային խնդիրներին: Ախուրյան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը նպատակ է հետապնդել արդյունավետ պլանավորման և հետևողական աշխատանքի միջոցով բարձրացնել համայնքի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման նշաձողը, հստակեցնել վերջիններիս իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ է ունեցել ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու համար:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանի կատարման հաշվետվությունն ուսումնասիրելիս տեսանելի է, որ 2023 թվականի համար նախատեսված ծրագրերը հիմնականում իրականացվել են պատշաճ: Ընթացիկ և ստացված արդյունքները գոհացնող են, նախատեսված համայնքային և պետական միջոցները ծախսվել են սահմանված նպատակներին համապատասխան: Հաշվետու տարում նպատակասլաց և ջանադիր աշխատանքի շնորհիվ հաջողվել է իրականացնել մեծածավալ աշխատանք: Սակայն կան ծրագրեր, որոնք մեր կամքից անկախ ավարտին չեն հասցվել նախատեսված ժամկետներում: Աշխատանքներ են տարվում նման ծրագրերը պատշաճ, հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտելու համար:

Տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվության մեջ ներկայացված է հաշվետու տարում տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերլուծությունը՝ ըստ ոլորտների, հաշվի են առնվել մշտադիտարկման արդյունքում արված եզրակացություններն ու առաջարկությունները:

Հավելված 1-ում ներկայացված է համայնքի 2023 թվականի բյուջեի կատարողականը (ըստ ոլորտների) և բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման:

Համայնքի 2023 թվականի ՏԱՊ-ի իրականացման վերլուծություն (ըստ ոլորտների)

Ընդհանուր համայնքային ոլորտ

Ոլորտում ՏԱՊ-ով նախատեսվել է իրականացնել «Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում» ծրագիրը: Բարելավվել են աշխատակիցների աշխատանքային պայմանները, ծրագիրն ընթանում է բնականոն հունով: Միայն կատարվել են որոշակի փոփոխություններ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կազմում: Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 112-Ա որոշման լուծարվել են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համայնքային գրադարան» և «Ախուրյանի Ֆերմատա արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ները, նույն որոշմամբ ստեղծվել է «Ախուրյանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը: Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 138-Ա որոշման լուծարվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» ՀՈԱԿ-ը:

Պատշաճ կերպով գործել են համայնքապետարանի պաշտոնական և համայնքային համացանցային կայքերը, շահագործվում է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը», որով իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն: Համայնքի պաշտոնական, համայնքային համացանցային կայքերի և սոցիալական ցանցի առկայությունը (**akhuryan.am, akhuryan.shirak@mail.ru, akhuryan.shirak@gmail.com,**) հնարավորություն է տալիս ավելի արագ և արդյունավետ կազմակերպել աշխատանքները, համայնքի բնակիչները հնարավորություն ունեն համայնքապետարանի պաշտոնական կայքէջի միջոցով ծանոթանալու համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններին, համայնքային բյուջեին, բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականներին, բյուջեի մուտքերին, ՏԻՄ-երի՝ ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտերին (որոշում, կարգադրություն), հնարավորություն ունեն կայքէջի միջոցով ուղարկել առցանց դիմում և հետևել իրենց դիմումի կարգավիճակին, ծանոթանալ համայնքապետարանի աշխատակազմին և այլն:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակիցների կողմից ՔԿԱԳ ծառայությունների մատուցման գծով 2023 թվականի ընթացքում իրականացված գործառույթներ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Գործարքի քանակը	Արտոնությունների կիրառման քանակը	Գանձված պետական տուրքը
1.	2.	3.	4.	5.
1	Ծննդյան ակտային գրանցում կատարելու վերաբերյալ դիմում	580	-	-
2	Ամուսնության ակտային գրանցում կատարելու վերաբերյալ դիմում	179	-	-
3	Ամուսնալուծության ակտային գրանցում կատարելու վերաբերյալ դիմում	39	3	300000
4	Հայրության ճանաչման ակտային գրանցում կատարելու վերաբերյալ դիմում	228	106	122000
5	Մահվան ակտային գրանցում կատարելու վերաբերյալ դիմում	54	-	-
6	Անվան փոխման ակտային գրանցում կատարելու վերաբերյալ դիմում	36	4	840000
7	Որդեգրման ակտային գրանցում կատարելու վերաբերյալ դիմում	0	-	-
8	Քաղաքացիական կացության ակտային գրանցման վերականգնման դիմում	18	10	35000

9	Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու դիմում	211	-	-
10	Քաղաքացիական կացության ակտային գրանցման մասին պետական վկայականի կրկնօրինակ ստանալու դիմում	311	90	975000
11	Քաղաքացիական կացության ակտային գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանք ստանալու դիմում	308	-	-
12	Կատարված ուղղման գործ	237	116	655000
13	Ստացված հարցում, հաղորդում	796	-	-
12	Ուղարկված հարցում, հաղորդում	627	-	-
13	Թվայնացված	1083	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	4707	329	4025000

2023 թվականի հունվարի 01-ից վարվել է «Վեկտոր+» տեղեկատվական ավտոմատացված համակարգը՝ գրանցվել են համակարգում բացակայող փոխադրամիջոցները, շինությունները և հողատարածքները, իրականացվել է հարկատուների ընթացիկ հաշվառում, հեռացվել են համակարգում առկա կրկնակի գրանցումները, համակարգում կատարվել են ճշտումներ՝ կադաստրային ստորաբաժանման կողմից տրամադրված տվյալների հիման վրա: Համայնքների եկամուտների կառավարման համակարգի միջոցով իրականացվել է օգտվողի գործառույթները՝ մասնավորապես հարկատուների կողմից վճարումների բաշխումներ, տրամադրվել տեղեկանքներ, սխալների առկայության դեպքում գրանցվել է տվյալների ուղղման հայտ, անշարժ գույքի հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթեր ներկայացրած անձանց սահմանվել է արտոնություն, օրենքով սահմանված կարգով կատարվել է գերավճարների հաշվանցում և վերադարձ: Կազմվել է 500000(հինգ հարյուր հազար) և ավելի հարկային պարտավորություն ունեցող անձանց ցուցակ և իրականացվել է ծանուցագրեր տրամադրելու աշխատանքներ: Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով

իրականացվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն: Կազմվել է և ավագանու քննարկման է ներկայացվել փոխադրամիջոցների և անշարժ գույքերի արտոնության տրամադրման նախագծեր:

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության ոլորտ

2023 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Քաղաքացիական պաշտպանության և տարհանման պլանների վերամշակում և հաստատում:
2. Ամբողջությամբ մաքրվել են համայնքի Հայկավան և Ոսկեհասկ բնակավայրերի սելավատարեր:
3. ՀՀ ՊՆ Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանմանը աջակցություն է ցուցաբերվել վարժական հավաքները պատշաճ ձևով կազմակերպելու և անցկացնելու հարցում:
4. Համայնքի նախադրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցների հետ անցկացվել են հակահրդեհային, տարհանման, ազդարաման և երկրաշարժադիմացկունության վերաբերյալ սեմինար-պարապմունքներ:
5. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյանի «Հեքիաթ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կրակմարիչները փոխարինվել են նորերով:
6. Էլեկտրաշչակներ են տեղադրվել համայնքի Հովունի, Ոսկեհասկ, Բայանդուր, Ախուրիկ, Հացիկ, Վահրամաբերդ և Մայիսյան բնակավայրերում:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, շրջակա միջավայրի պահպանության ոլորտներ

«Ախուրյան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից 2023 թվականի ընթացքում կատարած աշխատանքներն ըստ բնակավայրերի									
Հ/Հ	Բնակավայր	Կատարված աշխատանքներ	Կատարողական ակտի աշխատանքները ըստ գյուղեր	Դիզ.վառելանյութ չափման միավոր լ.	Դիզ.վառելանյութ չափման միավոր Ընդամենը արժեքը	Օգտագործված նյութեր	Աշխատավարձ / քաղ. իրավ./	Բենզին	Ծառայության գումար
1	Այգաբաց	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման,գյուղամիջյան ճանապարհների հարթեցման, մանկապարտեզի զրուցարանի պատրաստման վերանորոգման աշխատանքներ	1447458	433	202620	1148838	96000	0	0
2	Ախուրյան	Համայնքապետարանի շենքի կոյուղահորի կառուցման, մանկապարտեզների ջրատաքացուցիչների վերանորոգում և զրուցարանի պատրաստման, փողոցների աղբահանության և աղբարկղերի մաքրման և ծածկման աշխատանքներ, աղբահավաքման կետերի դռների պատրաստման աշխատանքներ,փողոցային լուսավորության վերանորոգման,շենքերի մուտքի դռների պատրաստման և տեղադրման,կտուրի վերանորոգում, Ախուրյան բնակավայրի փողոցների ձյան մաքրման, հարթեցման, ավազա-աղային խառնուրդի փռման աշխատանքներ, գյուղի գերեզմանոցի մետաղական պարսպի ճաղավանդակների պատրաստման ևտեղադրման աշխատանքներ, գերեզմանատան լուսատուների վերանորոգման	13533466	10850	5253933	6513813	997000	252720	516000

		աշխատանքներ,ջրատար առուների մաքրման և վերանորոգման, ինչպես նաև խոտհնձման աշխատանքներ, «Բադոյի Ձոր» կոչվող աղբավայրի մաքրում աշխատանքներ							
3	Բենիամին	գյուղ մտնող ճանապարհի փոսալցման և հարթեցման աշխատանքներ, ձյան մաքրման, փողոցային լուսավորության վերանորոգման, սելվատարի մաքրման, ջրատարների մաքրման աշխատանքներ	661554	515	248589	338605	65000	9360	
4	Բայանդուր	փողոցային լուսավորության վերանորոգման, աղբի մաքրման, ճանապարհների փոսալցման և ավազով հարթեցման աշխատանքներ,ազդանշանային շչակների տեղադրման աշխատանքներ	887940	342	164017	723923			
5	Երազգավորս	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման, փողոցների աղբահանության և հարթեցման, մաքրման աշխատանքներ	438433	98	48040	390393			
6	Ջրառատ	գյուղի ճանապարհների մաքրման, հարթեցման, փողոցային լուսավորության վերանորոգման, սելավատարի մաքրման, ավտոբուսի կանգառի սպասասրահի վերանորոգման աշխատանքներ	1129387	368	179842	814545	135000		
7	Ջաջուռ	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման աշխատանքներ	676007	296	154520	521487			
8	Վահրամաբերդ	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման աշխատանքներ	225210	15	8250	216960			

9	Շիրակ	գյուղի փողոցային լուսավորության վերանորգման աշխատանքներ	53125	45	23125	30000			
10	Ոսկեհասկ	ճանապարհների ձյան մաքրման, խճապատման և հարթեցման, փողոցային լուսավորության վերանորոգման, ջրատար առուների մաքրման աշխարանքներ	1937251	2340	1174018	713873	40000	9360	
11	Գետք	գյուղամիջյան ճանապարհների հարթեցման, փողոցային լուսավորության վերանորոգման աշխատանքերի	219466	220	107376	112090			
12	Հովիտ	ներբնակավայրային ճանապարհների մաքրման և խճապտման աշխատանքներ, փողոցային լուավորության վերանորոգման, սելավատարի մարքման աշխատանքներ	509732	256	122448	387284			
13	Կամո	փողոցային լուսավորության վերանորոգման, ներբնակավայրային ճանապարհների մաքրման աշխատանքներ	485665	694	329480	156185			
14	Ազատան	ներբնակավայրային ճանապարհների մաքրման,փողոցային լուսավորության վերանորոգման, սելավատարի մաքրման աշխատանքներ	3426348	2765	1373427	2052921	3426348		
15	Փոքրաշեն	բնակավայրի փողոցային լուսավորության վերանորոգման աշխատանքներ	54528	5	2750	51778	54528		
16	Հացիկ	ներբնակավայրային ճանապարհների խճապատման և հարթեցման, փողոցային լուսավորության վերանորոգման, ազդանշանային շչակների տեղադրման աշխատանքներ	562246	887	487045	75201			

17	Քեթի	գյուղի մանկապարտեզի ճանապարհի խճապատման և հարթեցման աշխատանքներ	172596	50	27800	144796			
18	Կառնուտ	ներբնակավայրային ճանապարհների ձյան մաքրման և հարթեցման, փողոցային լուսավորության վերանորոգման, ջրագծի վերանորոգման աշխատանքերի	801473	1198	562361	219456		19656	
19	Մարմաշեն	մանկապարտեզի բակի դարպասի պատրաստման և տեղադրման նորոգման, ներբնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	414304	214	109410	264894	40000	414304	
20	Բասեն	գյուղի խմելու ջրագծի վերանորոգման անցկացման,մանկապարտեզի բակի բարեկարգման, ճանապարհների փոսալցման, աղբահանման և հարթեցման աշխատնքներ,փողոցային լուսավորության մոնտաժման և վերանորոգման աշխատանքներ	1315565	833	392869	687016	231000	4680	
21	Ղարիբջանյան	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման, ներբնակավայրային ճանապարհների հարթեցման աշխատանքներ	1089370	1099	527952	369418	192000	1089370	
23	Հովունի	նոր կոյուղագծի կառուցման աշխատանքներ	299200	64	35200	264000			
24	Ախուրիկ	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման, ներբնակավայրային ճանապարհների ձյան մաքրման աշխատանքներ	652172	176	85241	566931			

25	Արևիկ	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման,ճանապարհների փոսալցման և հարթեման, ազդանշանային շչակների տեղադրման աշխատանքներ	1710630	1253	584784	1125846	0		
26	Առափի	ներբնակավայրային ճանապարհների մաքրման, հարթեցման և խճապատման, փողոցային լուսավորության վերանորոգման աշխատանքեր	586366	505	249366	182000	155000		
27	Մեծ Սարիար	տարածքի սար տանող ճանապարհի փոսալցման և հարթեցման աշխատանքներ	72925	115	72925				
28	Հայկավան	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման ,ճանապարհների փոսալման և հարթեման, ազդանշանային շչակների տեղադրման աշխատանքներ	431260	90	48000	383260			
29	Մայիսյան	գյուղի փողոցային լուսավորության վերանորոգման ,ճանապարհների փոսալման և հարթեման, բուժ-ամբուլատորի կտուրի վնասված հատվածի վերանորոգման աշխատանքներ	1108240	1388	736280	371960			
30	Կարմրաքար	բնակավայրի խմելու ջրագծի անցկացման աշխատանքներ	735576	720	396000	254576	85000		
	Ընդամենը		35637493	27834	13707668	19082049	2036000	295776	516000

«Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից 2023 թվականի ընթացքում կատարած աշխատանքներն ըստ բնակավայրերի

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Աղբահանության իրականացում	Փողոցային լուսավորություն	Ճանապարհների նորոգում և խճապատում	Ջրամատակարմաան և քլորացման աշխատանքներ	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	Կանաչապատում և ծառերի էտում	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Ազատան	725612	73080	53278	0	0	0	851970
2	Արևիկ	22512	0	0	0	0	0	22512
3	Լեռնուտ	0	53556	497077	142144	0	0	692777
4	Կամո	0	943645	7504	168029	0	0	1119178
5	Կապս	0	592320	424652	52528	4467544	0	5537045
6	Կառնուտ	0	14649	0	102650	0	0	117299
7	Կարմրաքար	0	0	167521	86300	0	0	253821
8	Կրաշեն	0	26166	229019	185526	0	0	440711
9	Հայկավան	0	115807	892119	0	0	8207	1016133
10	Հացիկ	0	220015	862343	0	0	0	1082358
11	Հովիտ	0	0	0	4700	0	0	4700
12	Հովունի	2345	358860	73984	150992	941740	0	1527921
13	Ղարիբջանյան	0	10115	201295	15008	1998210	0	2224628
14	Մայիսյան	344369	200000	1740089	223375	0	0	2507833
15	Շիրակ	0	244936	41272	38456	0	0	324664
16	Ջաջուռ	0	347156	343924	115960	0	0	807040
17	Ջաջուռավան	0	29437	71209	560426	0	0	661072
18	Ջրառատ	0	9849	22512	90000	11366	0	133727
19	Վահրամաբերդ	0	228011	143280	15008	114804	297010	798113
20	Փոքրաշեն	0	249026	72882	68189	16752	0	406849
21	Բասեն	0	0	0	99008	0	0	99008
22	Քեթի	47362	124657	139533	250760	45586	0	607898
23	Մեծ Սարիար	0	61666	1125474	105450	0	0	1292590
24	Առափի	265201	57826	642325	93311	0		1058663
25	Մարմաշեն	132883	376033	1774957	435507	55745		2775125
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1540284**	**4336810**	**9526249**	**3003327**	**7651747**	**305217**	**26363635**

Կրթության, մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում 2023 թվականին գործել է թվով 14 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից մեկը՝ «Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը սկսել է իր գործունեությունը 2023 թվականի ապրիլ ամսից: 2023 թվականին նախահաշվով նախատեսված երեխաների թիվը եղել է 885, սակայն ցուցակային թիվը 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ կազմում է 833 սան: 14 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդհանուր աշխատակիցների հաստիքային միավորը 211-ն է, որից 99-ը մանկավարժական աշխատողներն և դաստիարակի օգնականներն են: Ծնողական վարձավճարի չափը ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 01-ի թիվ 05-Ն որոշմամբ սահմանվել է 5000 դրամ: 2022 թվականի մարտի 25-ի թիվ 42-Ա որոշմամբ հաստատվել է համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճարի արտոնությունների կարգը, նշված կետից ներկա պահին օգտվում է 132 սան:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ունենք նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, որոնք ՏՄԱԿ-ի կողմից ստացել են համապատասխան եզրակացություն: Նշված սաների թիվը ներկա պահին 10-ն է, որից 7-ը՝ «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, 1-ը՝ «Այգաբացի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում և 2-ը՝ «Արևիկի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում: Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 1169-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի նշված սաների համար պետական բյուջեից լինելու է ֆինանսավորում, 10 սանի համար ներկայացվել է բյուջետային հայտ ֆինանսավորման համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հուլիսի 25-ի 27-Ն հրամանի համաձայն նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի պարտադիր վերապատրաստումն իրականացվում է պետական բյուջեի հաշվին: 2023 թվականին 14 նախադպրոցական ուսումնական հաստատությունների թվով 10 մանկավարժական աշխատողներ մասնակցել են վերոնշյալ վերապատրաստմանը:

2023 թվականին լիցենզավորվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թվով 3 մանկապարտեզ՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մայիսյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Կամոյի մանկապարտեզ» ՀՈԱԿ և ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Քեթիի մանկապարտեզ» ՀՈԱԿ: Այս պահին ունենք թվով 4 չլիցենզավորված մանկապարտեզ՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ոսկեհասկի մանկապարտեզ» ՀՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռի մանկապարտեզ» ՀՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ և ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Հայկավանի Ալվան Ծաղիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ:

ՀՀ Կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 746-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թվով 14 ՆՈՒՀ-երում իրականացվել է ներքին գնահատում:

Արցախից բռնի տեղահանված և Ախուրյան համայնքի բնակավայրերում բնակություն հաստատած ընտանիքներից մանկապարտեզ է հաճախում թվով 8 սան՝ «Շուշան մանկապարտեզ» ՀՈԱԿ- 2 սան, «Քեթիի մանկապարտեզ» ՀՈԱԿ- 1 սան, «Մայիսյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ- 1 սան, «Հայկավանի Ալվան Ծաղիկ» ՀՈԱԿ- 1 սան, «Լեոյի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ- 3 սան:

- *ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում 2023 թվականին գործել է 2 երաժշտական, 1 արվեստի դպրոց և 2 մարզամշակութային կենտրոն*

<u>Երաժշտական դպրոցներ</u>

- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ /4 բաժին, 3 վարչատնտեսական աշխատող, 6 մանկավարժ, 34 սան/
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Վահրամաբերդի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ /3 բաժին, 3 վարչատնտեսական աշխատող, 6 մանկավարժ, 30 սան/

<u>Արվեստի դպրոց</u>

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշենի արվեստի դպրոց» ՀՈԱԿ, որն ունի 5 բաժին, 3 վարչատնտեսական աշխատող, 8 մանկավարժ, 41 սան:

Նշված դպրոցներում իրականացվում է «Ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» պետպատվերի ծրագիրը, որով նախատեսված ուսման վարձավճարները տրամադրվում են յուրաքանչյուր ամիս, պետության կողմից հաստատված վճարման ժամանակացույցի համաձայն: Պետպատվերի շրջանակից օգտվել է 26 երեխա:

Արվեստի և երաժշտական դպրոցներում կազմակերպվում են հաշվետու համերգներ, բաց և փակ համերգներ, տոնական միջոցառումներ, երգչախմբային համերգներ, վարպետաց դասեր, հանդիպումներ ճանաչված արվեստագետների հետ:

Արվեստի և երաժշտական դպրոցների գործունեության նպատակն է՝

- ծավալել ուսումնական գործունեություն մատաղ սերնդի համար երաժշտության և արվեստի մյուս բնագավառներում /պետական օրինակելի ուսումնական պլանների համաձայն/,
- ձեռք բերել նախնական ուսումնառություն,
- ձևավորել արվեստի բնագավառում երեխայի աշխարհընկալումը,
- նպաստել գեղագիտական ու աշխատանքային դաստիարակության ձևավորմանը,
- ունենալ զարգացած, կիրթ, արվեստասեր հասարակություն:

<u>Մարզամշակութային կենտրոններ</u>

- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ

ՀՈԱԿ-ն իրականացնում է արտադպրոցական ուսուցում՝ երաժշտական կրթության, մշակույթի ոլորտում: Իրականացնում է գրադարանային գործի վարումը համայնքի Ախուրյան, Վահրամաբերդ, Բենիամին, Կապս, Այգաբաց

բնակավայրերում/100000 կտոր գիրք/: Իսկ համայնքի մնացած բնակավայրերի մեծ գրքային ֆոնդը գտնվում է տարբեր վայրերում և համարվում են փակ դռներ: Կազմակերպում է Ախուրյան համայնքի բնակիչներին / ցանկության համաձայն/ գրքերի սպասարկումը, գիտության և մշակույթի գործիչներին և նրանց ստեղծագործություններին իրազեկումը և տարածումը, գեղագիտական դաստիարակությունը, ազատ ժամանակի կազմակերպումը և օժանդակում է կրթական համակարգի գործունեությանը: Իրականացնում է ակումբային աշխատանքների կազմակերպումը ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան, Արևիկ, Հովիտ, Վահրամաբերդ, Կառնուտ, Բասեն, Մայիսյան, Այգաբաց բնակավայրերում, որտեղ հաճախակի կազմակերպվում են համերգային ծրագրեր և միջոցառումներ: ՀՈԱԿ-ն ունի 12 վարչատնտեսական աշխատող, 7 բաժին, 17 մանկավարժ, 7 գրադարանավար, 6 ակումբավար, 170 սան:

- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ

ՀՈԱԿ-ը հանդիսանում է «Ա. Ի. Խաչատրյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի իրավահաջորդը: Իրականացնում է կրթական, մշակութային և սպորտային նախնական մասնագիտական ուսուցում: Իրականացնում է արտադպրոցական ուսուցում՝ երաժշտության ու պարարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի, թատերական արվեստի, ֆուտբոլային խաղի ուսուցում գրադարանային գործի վարում կազմակերպում է համերգներ, թատերական ներկայացումներ, տարաբնույթ միջոցառումներ, որոնք ուղղված են սաների գեղագիտական, բարոյահոգեբանական, աշխատանքային դաստիարակությանը: Նպատակ ունենալով՝ սաների մոտ ամրապնդելու ազգայինը, հաղորդակից դարձնելու համաշխարհային գրականությանը և փորձին, բացահայտելու շնորհալի երեխաներին: /7 բաժին, 5 խմբակ, 8 վարչատնտեսական աշխատող, 27 մանկավաժ, 310 սան/:

- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ը

  Գործունեության նպատակն է՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով համայնքի դպրոցահասակ երեխաների առողջության պահպանումը և ամրապնդումը, մարզական ընդունակությունների կատարելագործումը: Համալիր մարզադպրոցն ունի 12 վարչատնտեսական աշխատող և 19 մարզիչ-մանկավարժ, 251 սան:

Համալիր մարզադպրոցում 2023 թվականի ընթացքում գործել է 7 մարզաձև.

- հունահռոմեական ըմբշամարտ
- բռնցքամարտ
- ծանրամարտ
- ակրոբատիկա
- ազատ ոճի ըմբշամարտ
- ֆուտբոլ
- ձյուդո

Հաշվետու ժամանակահատվածում ՀՈԱԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ մեծ միջոցառումները.

- հուշամրցաշար՝ նվիրված Արցախյան ազատամարտում նահատակված մարզադպրոցի սաների հիշատակին,
- միջազգային հունահռոմեական մրցաշար,
- Համահայկական խաղերին մասնակցություն,
- սաները մշտապես մասնակցություն են ունեցել հանրապետական և միջազգային բնույթի մրցաշարերի և զբաղեցրել տարբեր մրցանակային տեղեր

➢ **2023թվականին կազմակերպված և անցկացված միջոցառումները.**

Հունվարի 20-ին – ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի մշակույթի տանը տեղի ունեցավ թատերական խմբակի կատարած բեմադրությունների դիտում: Անցկացվեց քննարկում, որի արդյունքում ձեռք բերվեց համաձայնություն՝ լավագույն բեմադրությամբ համայնքի բնակավայրերում հանդես գալու նպատակով:

Հունվարի 28-ին - համայնքի բոլոր բնակավայրերի գերեզմանատներում և հուշարձանների մոտ տեղի ունեցան խոնարհումի և խնկարկումի միջոցառումներ, կատարվեց է հոգեհանգստի կարգ:

Փետրվարի 11-ին – ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի Ֆերմատա արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում տեղի ունեցավ քանոնի դասարանական համերգ:

Փետրվարի 15-ին – ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ում տեղի ունեցավ Տեառնընդառաջին նվիրված միջոցառում:

Փետրվարի 20-ին – ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Կամոյի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում տեղի ունեցավ հանդիպում «Հավերժության ճանապարհին» գրքի հեղինակի հետ:

Փետրվարի 22-ին – ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ում մայրենի լեզվի օրվա առթիվ տեղի ունեցավ ասմունքի մրցույթ-ցերեկույթ, որին մասնակցում էին համայնքի բնակավայրերի երեխաները:

Փետրվարի 25-ին–Անդրանիկ զորավարի 158-ամյակի առթիվ հարգանքի տուրք մատուցվեց համայնքի Ոսկեհասկ և Երազգավորս բնակավայրերում կանգնեցված հերոսի հուշարձանի մոտ:

Մարտի 13-ին- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ում կանանց նվիրված տոնական միջոցառում-սեմինար, որը կրում էր «Աշխարհահռչակ հայ կանայք» խորագիրը:

Մարտի 24-ին- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի մշակույթի տանը տեղի ունեցավ մայիսյանցի գեղանկարիչ Աշոտ Հովհաննիսյանին նվիրված միջոցառում, սահիկահանդեսի ցուցադրում և մենահամերգ՝ երգիչ- երգահան Դավիթ Ամալյանի կատարմամբ:

Ապրիլի 04-ին–Քառօրյա պատերազմում անմահացած Աշոտ Շահբազյանին նվիրված հուշ-ցերեկույթ է կազմակերպվել Երկրապահ պատանիների միության անդամների հետ նրա հիշատակն հավերժացնող հուշարձանի մոտ:

Ապրիլի 24-ին –Հայոց Մեծ եղեռնին նվիրված միջոցառումներ բնակավայրերում:

Ապրիլի 29-ին – Հանդիսավոր միջոցառում՝ նվիրված Քաղաքացու օրվան:

Մայիսի 07-ին - պարի փառատոն ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդի մշակույթի տանը:

Մայիսի 08-ին- Շուշիի օրվան նվիրված հիշատակի միջոցառումների շարք համայնքի բնակավայրերում:

Մայիսի 09-ին - միջոցառումներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմին/համայնքի բնակավայրերում/:

Մայիսի 28-ին-համայնքը հին ազգային կենցաղային երաժշտական ֆոլկլորով՝ հին աշխատանքային ու երաժշտական գործիքների նմուշներով, գոբելեն աշխատանքներով և երգչախմբային արվեստով, մասնակցել է Երևան քաղաքում անցկացված «Ճանաչիր Հայաստանը» մարզային զբոսաշրջային ցուցահանդեսին:

Մայիսի 28-ին- ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքում, Հայոց պետականության վերականգնման 105-ամյակին նվիրված տոնակատարությանը համայնքը ներկայացել է կիրառական արվեստի, Շիրակի բարիքների ցուցադրությամբ:

Հունիսի 01-ին - Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում է տեղի ունեցել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի մշակույթի տանը և Ախուրյան բնակավայրի Մայր Հայաստան կոթողի մոտ տեղի են ունեցել միջոցառումներ՝ *նվիրված Հայաստանի Հանրապետության դրոշին:*

Հունիսի 15-ին - ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշենի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում տեղի է ունեցել տարեվերջյան հաշվետու համերգ:

Հունիսի 20-ին - ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում տեղի է ունեցել տարեվերջյան հաշվետու համերգ և խմբակների ձեռքի աշխատանքների ցուցադրություն:

Հունիսի 23-ին - ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի ֆերմատա արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում տեղի է ունեցել տարեվերջյան հաշվետու համերգ:

Հունիսի 25-ին - ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի սաներն իրենց անհատական և անսամբլային կատարումներով մասնակցել են Ծաղկաձոր -2023 թվական հանրապետական երաժշտական փառատոնին, արժանացել խրախուսական պարգևների:

Հունիսի 26-ին- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում տեղի է ունեցել տարեվերջյան հաշվետու համերգ:

Հունիսի 28-ին - ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Վահրամաբերդի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում տեղի է ունեցել տարեվերջյան հաշվետու համերգ:

Հուլիսի 03-ին – Հաշվետու համերգ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրի մշակույթի տանը:

Հուլիսի 04-ին - Գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Միսաք Մեծարենցին ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի մշակույթի տունը:

Հուլիսի 07-ին և 08-ին- «Եկեք ծանոթանանք» խորագիրը կրող միջոցառումների շարք՝ ժողովրդական նվագարանների ծանոթացում Ազատանի մանկապարտեզի ավագ խմբերում, տեղի երաժշտական դպրոցի նախաձեռնությամբ:

Հուլիսի 15-ին-ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի պարի խմբի մասնակցությունը Ծաղկաձորում անցկացված «Զարթոնք» փառատոնին:

Հուլիսի 20-ին-Գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Մինաս Ավետիսյանին ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի

Վահրամաբերդ բնակավայրի մշակույթի տունը:

Հուլիսի 26-ին -Գրական ցերեկույթ՝ նվիրված Միսաք Մանուշյանին ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ում:

Օգոստոսի 12-ին- Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառում ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրում:

Սեպտեմբերի 09-ին- Դիլիջան քաղաքում անցկացված «Արհեստների և արվեստների միջազգային փառատոն»-ին ազգային ֆոլկլորով հանդես եկան ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի սաները:

Սեպտեմբերի 16-ին- Մոսկվայի տան հրավերով, Արմավիր քաղաքում կազմակերպված մշակութային միջոցառմանը հանդես եկան ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի ժողովրդական նվագարանների /քանոն/ բաժնի սաները:

Սեպտեմբերի 27-ին- համայնքի բոլոր բնակավայրերում տեղի ունեցան խոնարհումի ու խնկարկումի միջոցառումներ: Ծաղիկներ, ծաղկեպսակներ դրվեցին և հոգեհանգստի կարգ մատուցվեցին համայնքի բնակավայրերի գերեզմանատներում՝ ի հիշատակ Արցախյան գոյամարտերում նահատակված հայորդիների:

Հոկտեմբերի 10-ին-«Աշուն» խորագրով փառատոնին ազգային պարային կատարումներով հանդես են եկել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի սաները:

Հոկտեմբերի 14-ին-«Քաղաքս, ես և արվեստը» խորագրով միջոցառմանը մասնակցություն են ունեցել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի սաները:

Հոկտեմբերի 18-ին-«Վարդուհի արվեստի կենտրոնում» կայացած միջոցառմանը կատարումներով հանդես են եկել Ախուրյանի, Ազատանի, Արևիկի ժողովրդական նվագարաններ բաժնի սաները:

Նոյեմբերի 05-ին- «Եղի՛ր ուժ մեր երկրի համար» խորագրով միջոցառմանը մասնակցություն են ցուցաբերել համայնքի ՀՈԱԿ-ների սաները:

Դեկտեմբերի 07-ին- Խոնարհում Երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին միջոցառումների շարք:
Դեկտեմբերի 8-ին-«Կաթիդ փարան չմոռանաս, մամա» ներկայացման դիտում և քննարկում Ազատանի թատերական խմբակի սաների մասնակցությամբ:

Դեկտեմբերի 15-ից-25-ը- Ախուրյանի, Ազատանի, Արևիկի, Մարմաշենի, Վահրամաբերդի բնակավայրերի արվեստի, երաժշտական դպրոցներում և մարզամշակութային կենտրոններում կազմակերպվել են կիսամյակային համերգներ:

Դեկտեմբերի 20-ից-30-ը- Ազատան, Գետք, Մայիսյան, Մարմաշեն, Ախուրիկ, Վահրամաբերդ, Արևիկ, Ախուրյան բնակավայրերում ամանորյա հանդեսների անցկացում:

Դեկտեմբերի 26-ին- տեղի ունեցավ համայնքի ավագանու մշտական գործող՝ մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի հանձնաժողովի տարվա ամփոփիչ նիստը:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

- 2023 թվականի ընթացքում համայնքի բյուջեից ֆինանսական աջակցություն է ստացել թվով 293 անապահով ընտանիք, 15 ընտանիք էլ ստասել է հուղարկավորության կազմակերպման աջակցություն:
- Խուրհրդատվական աջակցություն է ստացել 722 ընտանիք կամ 3189 անձ:
- «Պանդո» ՀԿ- ի կողմից իրականացվել է տեղական ծրագիր «Գյուղատնտեսության և բիզնեսի աջակցության խորհրդատվական ծառայություններ» թեմայով դասընթացներ, դասընթացներին մասնակցել է 40 շահառու, որից 20 անդամ ձեռք է բերել գյուղատնտեսական ոլորտի, 20-ը ձեռնակատիրական ոլորտի մասնագիտություն: Շահառուներից 4-ը շահել է դրամաշնորհային ծրագիր, որից 2-ը սոցիալական ոլորտի:
- Կրաշեն բնակավայրում անցկացվել են հիգիենա, ինքնախնամք, սեռական հասունություն թեմաներով դասընթացներ 14 աղջիկների մասնակցությամբ:
- Շվեցարական դոնոր կազմակերպության կողմից շարունակվում է Այգաբաց և Արևիկ բնակավայրերում իրականացվող ծերերի խնամքը:
- Անցկացվել է սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը ապահովող մշտական գործող հանձնաժողովի 9 նիստ:
- Անցկացվել է համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 8 նիստ:
- Արցախից բռնի տեղահանված 101 ընտանիքների հետ տարվել են տարաբնույթ աշխատանքներ՝ տեղավորման, հաշվառման, կարիքների գնահատման, բաշխման, տեղաշարժերի գրանցման, տեղեկատվությունների տրամադրման, ուղղորդման, աջակցման և այլ տեսակի աշխատանքներ:
- 2024 թվականի ամանորի կապակցությամբ «Մարդը կարիքի մեջ» ծրագրի շրջանակում իրականացվել է Արցախից բռնի տեղահանված 13 ծերերի և 8 միայնակ ու հաշմանդամ ծերերի աջակցման ծրագիր:
- Համայնքում 2023 թվականին իրականացվել է մշակութային միջոցառումներ, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող տարբեր տարիքային խմբեր անձինք և ծեր թոշակառուներ:

- Հաշմանդամություն ունեցող քաղաքացիների և նրանց խնամող անձանց, սոցիալական մասնագետի հետ կազմակերպվել է երկու հանդիպում «Անձնական օգնականի» պետական ծրագիրը 2024 թվականին ներդնելու համար:
- ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության և ՄԱԿ-ի կողմից 2023 թվականին համայնքում ներդրվել է սննդի աջակցության քարտերի տրամադրման ծրագիր, որի շահառու են դարձել առավել խիստ կարիքավոր մի քանի տասնյակի հասնող ընտանիքներ:

Գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտ

Ոլորտում նախատեսված ծրագրերի նպատակն է եղել ստեղծել գյուղատնտեսության զարգացման համար նպաստավոր պայմաններ, բարելավել և ավելի արդյունավետ պլանավորման միջոցով բարձր մակարդակի հասցնել համայնքի բնակավայրերի անասնապահությունը, դաշտավարությունը, հողերի ագրոքիմիական բաղադրությունը, բնապահպանական կանաչ գոտիների, անտառապատ տարածքների ավելացումը, վերակառուցված ոռոգման համակարգերի և հակակարկտային կայանների անխափան աշխատանքի շնորհիվ բարձրացնել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության մակարդակը:

- Դաշտամիջյան ճանապարհների փոսալցման, ոռոգման առուների մաքրման և ճանապարհների խաչմերուկներում ոռոգման համար նախատեսված խողովակների տեղադրման աշխատանքներ:
- Համայնքի Բենիամին բնակավայրում կազմակերպվել, վերանորոգվել և շահագործման է հանձնվել արտեզյան պոմպակայան, և որպեսզի ջուրը բնակիչ-բաժանորդին ռացիոնալ մատակարարվի համայնքապետարանի աշխատակիցները բնակավայրի բնակիչների հետ կազմակերպել են բետոնապատ տաշտակների կառուցման աշխատանքներ:
- Ավարտվել են համայնքի Երազգավորս, Բենիամին և Հովիտ բնակավայրերի ոռոգման ցանցերի վերակառուցման և արդիականացման սուբվենցիոն ծրագրերի շինարարական աշխատանքները:
- Համայնքապետարանի աշխատակիցները բնակավայրերի անասնաբույժերի հետ իրականացրել են անասնագլխաքանակի հաշվառման գործընթացը:
- 2022 թվականին կառավարության 1313-Լ որոշման հիման վրա կազմակերպել է Ախուրյան համայնքի աշնանացան ցորենի ծրագրի մոնիթորինգը և տվյալներ ներկայացվել համապատասխան կառույցներ:
- «Էյ-Թի-Փի» բարեգործական կազմակերպության կողմից ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մեծ Սարիար բնակավայրում հիմնվել է 42 հա անտառ:

- Իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի չափագրման, փաստաթղթավորման, վարձակալության և օտարման մրցույթների կազմակերպումը:

Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցություն

2023 թվականի ընթացքում անցկացվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու թվով 17 նիստ, որից 6-ը՝ արտահերթ, 2-ն օրենքի ուժով: Ավագանու նիստերին ներկայացվել է 287 որոշման նախագիծ, որից ընդունվել է 232-ը, իսկ 55-ի վերաբերյալ ավագանին որոշում չի ընդունել: Ավագանու որոշումները վերաբերել են համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակների, պաշտոնային դրույքաչափերի ու համայնքի բյուջեի հաստատմանը, բյուջեում փոփոխությունների կատարմանը, բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումների տրամադրմանը, բյուջեից տարբեր ծրագրերի ֆինանսավորմանն ու համաֆինանսավորմանը, սուբվենցիոն ծրագրերի հաստատմանը, համայնքի բնակիչներին, արդյունքներ գրանցած մարզիկներին և մարզիչներին սոցիալական և դրամական աջակցություն տրամադրելուն, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելուն և այլ հարցերին:

Համայնքի կենտրոնում ու բնակավայրերում կազմակերպվել և անցկացվել է 23 հանրային լսում՝ համայնքի բյուջեի նախագծի քննարկման, համայնքում առկա հիմնախնդիրների վերհանման՝ դրանք ՀՀ համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերում ընդգրկելու նպատակով և այլ հարցերով:

Դրամաշնորհներ

Հ/Հ	Ծրագրի անվանում	Դոնոր կազմակերպության ներդրում/հազ. ՀՀ դրամ/	Համայնքի ներդրում /հազ. ՀՀ դրամ/
1	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի կոմունալ ծառայությունների և ենթակառուցվածքների բարելավում՝ տեխնիկական վերազինման միջոցով /թրթուրավոր էքսկավատոր և աղբատար մեքենա/	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ 11 210,0	5 900,0
2	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգման	«Կամրջակ» ՍԲՀԿ	

	աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրում ներդրում	10 735,6	
3	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրում ներդրում	«Շեն» ԲՀԿ 3 000,0	
4	«ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի Լեռնուտ բնակավայրի մանկապարտեզում ֆոտովոլտային կայանի տեղադրում» ծրագիրը «Երիտասարդների նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ	Ավստրիական զարգացման գործակալութուն 2 880,0	320,0
5	«ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրի նախկին դպրոցի շենքի վերակառուցումը որպես մանկապարտեզ» սուբվենցիոն ծրագրում	ՄԱԿ-ի զարգացման գործակալություն 3 997,9	
6	Խաղահրապարակի կառուցում Գետք բնակավայրում	«Վորլդ Վիժն Հայաստան» ՀԲՄԿ 600,0	300,0
7	Խաղահրապարակի կառուցում Ախուրյան բնակավայրում	«Վորլդ Վիժն Հայաստան» ՀԲՄԿ 1 200,0	300,0
8	Երիտասարդական համայնքային զարգացման կենտրոնի հիմնում Կրաշենում	Ավստրիական զարգացման գործակալություն 10 868,5	1 252,0
9	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Լիանա մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի/10 կՎտ/ և 320 լ. տարողությամբ արևային ջրատաքացուցիչի տեղադրում	Հայ օգնության միություն 3 500,0	
10	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում:	Լիտվայի Հանրապետության բնապահպանության նախարարությանը կից Բնապահպանական նախագծերի կառավարման գործակալություն	«Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 400,0

		4 032,0	
11	ՀՀ Շիրակի մարզի Գետքի գեներալ-մայոր Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգում: ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ծրագիր:	«Շեն» ԲՀԿ 5 711,8	2 700,0
12	ՀՀ Շիրակի մարզի «Հովիտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրային դահլիճի վերանորոգում: ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ծրագիր:	«Շեն» ԲՀԿ 5 928,0	1 200,0
13	ՀՀ Շիրակի մարզի «Ախուրիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրային դահլիճի վերանորոգում, գույքի ձեռքբերում և 5 կՎտ ֆոտովոլտային կայանի տեղադրում: ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ծրագիր:	Ավստրիական զարգացման գործակալություն 6 575,3	730,5
14	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի բակում այգեպուրակի հիմնում և ոռոգման համակարգի կառուցում: ՀՀ Շիրակի մարզի «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ծրագիր:	Ավստրիական զարգացման գործակալություն 3 131,0	347,0
15	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրում համայնքային կենտրոնի կառուցում: «Պանդո» ՀԶՀԿ կողմից ներկայացված ծրագիր:	Ավստրիական զարգացման գործակալություն 13 000,0	850,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	86 370,1	16 999,5

	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում 2023 թվականին իրականացված կապիտալ ծրագրեր					
	Ծրագրեր, որոնց շինարարական աշխատանքները ավարտվել են					
1	Բայանդուր բնակավայրի մանկարապարտեզի շենքի կառուցման աշխատանքներ՝ 2 փուլով					
	ԱՐԺԵՔԸ	275 636 704	Համայնքի բյուջեից	55 127 340	Պետական բյուջեից	220 509 363
2	Կառնուտ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում՝ 2 փուլով:					
	ԱՐԺԵՔԸ	275 781 022	Համայնքի բյուջեից	82 734 306	Պետական բյուջեից	193 046 715
3	Ջրառատ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքներ (2-րդ փուլ)					
	ԱՐԺԵՔԸ	212 128 542	Համայնքի բյուջեից 30%	63 638 562	Պետական բյուջեից 70%	148 489 979
4	Ախուրիկ բնակավայրի նախկին դպրոցի շենքի վերակառուցումը որպես մանկապարտեզ					
	ԱՐԺԵՔԸ	93 293 692	Համայնքի բյուջեից 30%	27 988 107	Պետական բյուջեից 70%	65 305 584
5	Վահրամաբերդ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	161 112 253	Համայնքի բյուջեից 40%	64 444 901	Պետական բյուջեից 60%	96 667 352
6	Ախուրյան համայնքի թվով 10 մանկապարտեզների տարածքների բարեկարգման, կեղտաջրերի հեռացման, ջեռուցման համակարգերի տեղադրման շինարարական աշխատանքներ/Քեթի, Ազատան, Ախուրյանի«Հեքիաթ մանկապարտեզ» Ջաջուռ, Ջաջուռավան, Շիրակ, Մարմաշեն, Վահրամաբերդ/					
	ԱՐԺԵՔԸ	221 964 318	Համայնքի բյուջեից 30%	66 589 295	Պետական բյուջեից 70%	155 375 023
7	Ազատան բնակավայրի 1-ին փողոցի ասֆալտապատման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	112 209 954	Համայնքի բյուջեից 55%	61 715 474	Պետական բյուջեից 45%	50 494 479
8	Ազատան բնակավայրի ներհամայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ /24-րդ փողոցի/					
	ԱՐԺԵՔԸ	54 804 3	Համայնքի բյուջեից 55%	30 142,4	Պետական բյուջեից 45%	24 661,9
9	Երազգավորս բնակավայրի 8-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	42 849 247	Համայնքի բյուջեից 55%	23 567 086	Պետական բյուջեից 45%	19 282 161

10	Բենիամին բնակավայրի թիվ 1 փողոցի ասֆալտապատման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	57 834 609	Համայնքի բյուջեից 55%	31 753 703	Պետական բյուջեից 45%	26 080 906
11	Կրաշեն, Մեծ Սարիար, Ջաջուռավան բնակավայրեր տանող ճանապարհների հիմնանորոգման և ասֆալտապատման /Մ7 հանրապետական նշանակության ճանապարհի կմ12+325-ից մինչև Կրաշենի խաչմերուկ/ աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	82 287 891	Համայնքի բյուջեից 55%	45 258 340	Պետական բյուջեից 45%	36 970 449
12	Հովիտ բնակավայրի ոռոգման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	46 514 304	Համայնքի բյուջեից 35%	16 280 006	Պետական բյուջեից 65%	30 234 297
13	Երազգավորս բնակավայրի ոռոգման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	31 254 326	Համայնքի բյուջեից 35%	10 939 014	Պետական բյուջեից 65%	20 315 311
14	Բենիամին բնակավայրի ոռոգման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	84 629 701	Համայնքի բյուջեից 35%	25 388 910	Պետական բյուջեից 65%	59 240 790
15	Երազգավորս բնակավայրի գազաֆիկացման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	121 288 530	Համայնքի բյուջեից 35%	42 450 986	Պետական բյուջեից 65%	78 837 545
16	Առափի բնակավայրի հին թաղամասի գազաֆիկացման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	127 661 616	Համայնքի բյուջեից 45%	57 447 727	Պետական բյուջեից 55%	70 213 889
17	Ախուրյան բնակավայրի Նոր Ախուրյան թաղամասի և Չարենց փողոցի, Կրաշեն բնակավայրի կոյուղագծերի կառուցման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	48 795 875	Համայնքի բյուջեից 38%	18 542 433	Պետական բյուջեից 62%	30 253 442
	ԸՆԴԱՄԵՆԸ	2 050 046 884	Համայնքի բյուջեից	724 008 590	Պետական բյուջեից	1 326 038 294

	Ծրագրեր, որոնց շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին և գտնվում են ընթացքի մեջ					
1	Ոսկեհասկ բնակավայրի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	229 175 337	Համայնքի բյուջեից 55%	126 046 435	Պետական բյուջեից 45%	103 128 902
2	Հայկավան գյուղի գազաֆիկացման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	89 485 091	Համայնքի բյուջեից 45%	40 268 291	Պետական բյուջեից 55%	49 216 800
3	Շիրակ գյուղի գազաֆիկացման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	88 324 823	Համայնքի բյուջեից 45%	39 746 170	Պետական բյուջեից 55%	48 578 653
4	Բասեն բնակավայրի ոռոգման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ					
	ԱՐԺԵՔԸ	202 194 546	Համայնքի բյուջեից 35%	70 768 091	Պետական բյուջեից 65%	131 426 454
5	Ախուրյան համայնքի թվով 10 մանկապարտեզների տարածքների բարեկարգման, կեղտաջրերի հեռացման, ջեռուցման համակարգերի տեղադրման շինարարական աշխատանքներ/ Հացիկի մանկապարտեզ/					
	ԱՐԺԵՔԸ	33 306 860	Համայնքի բյուջեից 30%	9 992 058	Պետական բյուջեից 70%	23 314 802
	ԸՆԴԱՄԵՆԸ	642 486 657		286 821 045		355 665 611

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 1

Համայնքի 2023թ.բյուջեի կատարողականը

Հազար դրամ

Հ/Հ	Ցուցանիշներ	Տարեկան պլան	Փաստացի կատարված պլան	%
1	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	0	2929,8	0
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	33365,8	45178,7	135
3	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ	189630,1	152034,1	80
4	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	215202,5	239559,9	111
5	Տեղական տուրքեր	9714,7	9246,7	95
6	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	2500,0	4065,1	163
7	Կապիտալ արտաքին դրամաշնորհներ ստացված միջազգային կազմակերպություններից	3997.9	3997.9	100
8	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	1500856,0	1500856,0	100
9	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	25152.0	25152.0	100
10	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0	0	0
11	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	1024030,0	441095,8	43
12	Գույքի վարձակալությունից եկամուտներ	102443,2	86259,9	84
13	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	1999,0	1999,0	100
14	Վարչական գանձումներ	123809.9	103189.3	83
15	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	3000,0	515,0	17
16	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	2880,0	2880,0	100
17	Այլ եկամուտներ ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	508339,9	503101,9	99

18	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	400000,0	400000,0	100
19	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-52644,7	-60379,1	115
20	Հավելուրդ/պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ	215905,9	307542,5	142

Համայնքի 2023թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման հոդվածների (ոլորտների)

Հազար դրամ

Աղյուսակ 2

Հ/Հ	Ցուցանիշներ	պլան	Գումար	տես. կշիռ
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1136117.5	994116,3	87
2	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	0	
3	Տնտեսական հարաբերություններ	902884.6	837590,7	93
4	Շրջակա միջավայրի պաշտպանություն	97850.2	86914.0	89
5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	513373.4	271943,3	51
6	Առողջապահություն	0	0	
7	Հանգիստ, մշակույթ և կրոն	38873.5	31108,2	80
8	Կրթություն	1306284.8	902679,6	69
9	Սոցիալական պաշտպանություն	25000.0	17880,0	71
10	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	426241.9	410968,6	96

Դիագրամ 1

2023թ. Բյուջեի մուտքերը

3 122 061,1

հազար դրամ



Դիագրամ 2

Համայնքի ֆոնդային

հազար դրամ

2023թ.բյուջեի եկամուտներն ըստ վարչական և մասերի

2 674 087,4



Վարչական բյուջեի եկամուտներ

847 973.8



Ֆոնդային բյուջեի եկամուտներ